


# Նորտարվա երազանքներ

## Ծրագրի նկարագրություն

Մենք նորից Հայաստանի երեխաների Նոր Տարվա Երազանքների ցանկ ենք կազմել՝ այս տարի մեր ուշադրության կենտրոնում պահելով տեղահանված երեխաներին: Նրանք շատ դժվարությունների միջով են անցել այս տարի: 2023 թվականի նոր տարին դիմավորել են շրջափակման մեջ: Իսկ երկու ամիս առաջ նրանց բռնի տեղահանել են իրենց տներից: Մինչ արցախցի երեխաները և նրանց ընտանիքները Հայաստանում նոր կյանք սկսելու գործով են ծանրաբեռնված, մենք ցանկանում ենք ուրախություն բերել նրանց տներ Նոր Տարվա անակնկալներով:

Ինչպես միշտ, ցանկությունների մեծ մասը, որոնք երեխաները մեզ պատմել են, շատ համեստ են՝ նաև բյուջեի առումով: Մենք ձգտում ենք որքան հնարավոր է շատ երազանքներ իրականացնել: Գործընթացը հետևյալն է՝ ամեն անգամ մի ցանկություն ենք ներկայացնելու, որի իրականացումից հետո, հաջորդելու է մյուսը: Եկեք միասին Ամանորին հաշվենք, թե դրանցից քանիսն են իրականություն դարձել: Պատրաստ եք:

## Բյուջե

| Ինչ | ՔԱՆԱԿ | Միավոր արժեք ՀՀ դրամ | Ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| Հեծանիվ | 40 | 40,000 | 1,600,000 |
| Մահճակալ | 7 | 130,000 | 910,000 |
| Ինքնագլոր | 9 | 35,000 | 315,000 |

**Ընդհանուր**

Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 402.88 ՀՀ դրամ

# ֏2,825,000